

ՎԱՂՈՒՑ ՍՊԱՍՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Արարատի 1926–1930 թթ. ապստամբության մասին*

Բանալի բառեր – Արարատի ապստամբություն, Հոյբուն, ՀՅ Դաշնակցություն, քեմալականներ, ԽՍՀՄ, Ռեզա շահ, Արտաշես Մուրադյան, Կարմիր բանակ, խորհրդային հետախուզություն, շրջափակում, պարտություն:

Երևանում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Մեսրոպ արք. Աշ-ձեան» մատենաշարով հրատարակվել է **Արամ Սերգեյի Սայիյանի** «Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը: Թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաձիթում» աշխատությունը¹:

Հայ-քրդական հարաբերությունների թեման մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե՛ գիտական և թե՛ արդիական-քաղաքական նկատառումներով: Հարևան ժողովուրդների կյանքում, որոնց փոխհարաբերությունները միշտ չէ, որ հարթ են ընթացել, չնայած համերաշխության ձգտումներին (հատկապես հայերի կողմից), այնուամենայնիվ, մինչ օրս ավելի շատ անվստահության մթնոլորտ է տիրում: Այդ անվստահությունից դեռևս լիովին չեն ձերբազատվել ինչպես հայերը, այնպես էլ հատկապես՝ քրդերը, ինչը բացատրվում է անցյալի ողբերգական իրադարձություններով, երբ վերջիններս աջակցում և ակտիվորեն մասնակցում էին թուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանությանը:

Նկատի ունենալով այդ ամենը, հաշվի առնելով արտաքին քաղաքական գործոնները հատկապես ապագայի տեսանկյունից՝ այժմ կարևոր է երկու ժողովուրդների միջև ակտիվ երկխոսության սկզբնավորումը: Ա. Սայիյանի մենագրությունը պետք է դիտարկել, գնահատել և կարևորել հենց վերոնշյալի համապատկերում, մանավանդ որ՝ այն ուսումնասիրվող թեմայի համապարփակ ներկայացման և քննության առաջին, բայցև հաջողված փորձն է:

Մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ներածության մեջ հստակորեն առաջադրված են թեմայի ուսում-

* Ընդունվել է տպագրության 5.09. 2017:

1 Տե՛ս **Արամ Սերգեյի Սայիյան**, Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը: Թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաձիթում, խմբագիր՝ **Գևորգ Ս. Խուդինյան**, Մեսրոպ արք. Աշձեան մատենաշար, թիվ 160, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017, 288 էջ:

Թ. (ԺԵ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 3 (59), հայիս-սեպտեմբեր, 2017
ՎՎԱ համահայկական հանդես

նասիրման նպատակներն ու խնդիրները, դրանց քննության մեթոդաբանական ելակետերը, հիմնավորվել է հետազոտության նորությը, կարևորվել է արդիական նշանակությունը՝ ապագայի տեսլականով: Հեղինակը նորահայտ արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, գրականության և մամուլի նյութերի լայն օգտագործմամբ, պատմա-համեմատական մեթոդի կիրառմամբ, քննական վերլուծության միջոցով ներկայացրել է Արարատի ապստամբության ճշգրիտ ու առարկայական պատմությունը:

Մենագրության **առաջին գլխի**՝ «Քենալականների ցեղասպանական քաղաքականությունը և քրդական շարժումը 1926-1927 թվականներին» **առաջին ենթագլխում**՝ «Թուրք-քրդական հարաբերությունները Թուրքիայի Հանրապետության ձևավորման շրջանում (համառոտ ակնարկ)» ընդհանուր առմամբ բավարար կերպով է շարադրված հարցի նախապատմությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «Քենալականների ցեղասպանական քաղաքականությունը և քրդական դիմադրության նոր օջախները 1925-1926 թթ.» ներկայացված են հանրապետական վարչակարգի հաստատումից հետո Թուրքիայի ցեղասպանական քաղաքականության շարունակման քենալական մեթոդներն ու նպատակները, իրականացման մեխանիզմներն ու կոնկրետ դրսևորումները, քրդերի և հայերի թրքացման պետական քաղաքականության առանձնահատկությունները: Բարեխղճորեն վերլուծված են 1920-ականներին քենալականների ընդունած օրենսդրական ակտերը՝ առաջին հայացքից գուցե չափազանց մանրամասն, բայց և անհրաժեշտ՝ քրդերին ճնշելու և հանրային կյանքից դուրս մղելու մեխանիզմները հասկանալու համար:

Հեղինակը ճիշտ է նկատել, որ ստեղծված իրավիճակում «Քրդերի գերակշիռ մասը շատ լավ հասկանում էր, որ իրենց դժբախտությունների միակ մեղավորը թուրքերն են, իսկ ավելի կոնկրետ՝ քենալականները: Քրդերի համար ամենամեծ չարիքը քենալականների կողմից իրականացվող բռնի թուրքացման քաղաքականությունն էր, որն իսկապես պատուհաս էր դարձել նրանց համար՝ պառակտելով առանց այդ էլ պատերազմներից և ապստամբություններից բզկտված քուրդ ժողովրդին» (էջ 69):

Երրորդ ենթագլխում՝ «Արարատի ապստամբության սկիզբը և առաջին հաջողությունները (1926-1927 թթ.)» իրավացիորեն արձանագրվել են ապստամբության թատերաբեմի ճիշտ ընտրության և քրդական շարժման բնույթի փոփոխության իրողությունները՝ իրենց քաղաքական, ժամանակագրական և աշխարհագրական բնութագրիչներով: Դրա հետ կապված հեղինակը նկատում է, որ «Քրդական ազգային ինքնագիտակցությունը շատ թույլ էր զարգացած, չունեի անհրաժեշտ հիմնավորումներ, աչքի էր ընկնում մի շարք խոցելի կողմերով, մանավանդ՝ մաքսիմալիզմով, երբ նպատակ էր դրվում պայքարի մեջ մտնել Քրդստանի տարբեր մասերին տիրացած երկրների հետ: Անհրաժեշտ էր ստեղծել մի համաքրդական կառույց, որը կջնջեր քուրդ ժողովուրդի մեջ առկա բոլոր տարբերությունները և թուրքերի դեմ մղվող պայքարի մեջ կներգրավեր նրա բոլոր շերտերին» (էջ 99-100):

Չորրորդ ենթագլխում՝ «Հոյբունի ձևավորումը և Հոյբուն-ՀՅ Դաշնակ-

ցություն համագործակցության սկիզբը», վերլուծելով քրդական շրջանակների դիրքորոշումների հոլովույթը՝ հանգամանալից կերպով ներկայացվել են Հոյբուն կուսակցության ձևավորումը, նպատակները, ՀՅԴ հետ համագործակցության սկզբունքները և գործնական քայլերը: Ա. Սայիյանը բացահայտել է նաև այդ գործում ՀՅԴ-ի լուրջ դերակատարության քաղաքական նշանակությունը, որովհետև «Հայերը քաղաքական առումով հիմնականում համախմբված լինելով Սփյուռքում ազդեցիկ ներկայություն հանդիսացող ՀՅ Դաշնակցության շուրջը, քրդերին կարող էին օգնել կազմակերպչական աշխատանքներով, հատկապես ընդհատակյա, որի հարուստ փորձը կուսակցությունը տասնամյակների ընթացքում կուտակել էր Օսմանյան և Ռուսական կայսրությունների դեմ պայքարում, ինչպես նաև դրամով, զենքով և մարտական փորձ ունեցող սպաներով ու զինվորներով (էջ 101):

Դրա հետ կապված՝ առարկայաբար գնահատվում է նաև հայ-քրդական հարաբերությունների նոր վիճակը. «Իհարկե, պնդել, թե քրդերի ու հայերի միջև տիրում էր լիակատար վստահություն և եղբայրություն՝ չի կարելի: Դեռ թարմ էին մոտ անցյալի հիշողությունները, բացի այդ՝ չլուծված էր մնում հիմնական հարցը՝ հողայինը: Եվ որպեսզի այդ հարցը չդառնա խաղաթուղթ թուրքերի ձեռքին և չվիժեցնի հայ-քրդական համագործակցությունը, կողմերը որոշեցին նրան անդրադառնալ թուրքերի նկատմամբ հաղթանակից հետո» (էջ 103):

Միանգամայն դրական գնահատելով ՀՅԴ-ի կողմից ցուցաբերվող նյութական ու բարոյական ահռելի օգնությունը, ապստամբների գործողությունների ռազմավարական և մարտավարական նպատակասլաց ուղղորդումը, մանավանդ՝ Արտաշես Մուրադյանի ունեցած կարևոր դերակատարությունը, հեղինակը եզրակացրել է. «Այսպիսով, ՀՅԴ և Հոյբունի համագործակցության արդյունքում Արարատ լեռան վրա կուտակված քրդական ուժերը վերածվեցին տարածաշրջանային քաղաքականության լուրջ գործոնի» (էջ 118):

Մենագրության **Երկրորդ գլխի** («Արարատի ապստամբությունը և տարածաշրջանային ուժերի հաշվեկշիռը») **առաջին ենթագլխում**՝ «Արարատի ապստամբության հաղթանակները և դրանց ազդեցությունը Թուրքիայի ներքաղաքական կացության վրա» ներկայացված է քրդերի որդեգրված պարտիզանական պայքարի մարտաոճը, նրանց առաջին լուրջ հաջողությունները պայմանավորող մյուս գործոնները:

Երկրորդ ենթագլխում՝ «Արարատի ապստամբությունը արևմտյան տերությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) քաղաքական հաշվարկներում» կարևորվել է այն հանգամանքը, որ Հոյբունը ՀՅԴ խորհրդով ընտրեց միայն հակաթուրք պայքարի ուղին՝ զերծ մնալով հարևան երկրների ընդգծված բացասական վերաբերմունքից, վերլուծվել են նաև քրդական հարցում անգլո-ֆրանսիական շահադիտական դիրքորոշումների նրբերանգները:

Երրորդ ենթագլխում «Քրդական շարժումը ԽՍՀՄ քաղաքական դեկավարության և Կարմիր բանակի գաղտնի ծրագրերում (1927-1929 թթ.)» ներկայացվում է քրդական հարցում ԽՍՀՄ դիրքորոշման բարդ հոլովույթը՝

նրա տարածաշրջանային շահերի համապատկերում: Մոսկվայի արխիվներից հայտնաբերված հետախուզական գեկուցագրերի վերլուծության հիման վրա հեղինակը եզրակացրել է, որ ԽՍՀՄ-ը դեմ էր քրդական շարժմանը՝ նրա հետ ՀՅԴ-ի ունեցած սերտ կապի և ապստամբության թատերաբեմը իր սահմաններին մոտ լինելու պատճառով, և Արտաշես Մուրադյանի առևանգմամբ փորձում էր թուլացնել այն: Դրա հետ միասին՝ հեղինակը կատարել է բավականին խորհմաստ դիտարկում. «ԽՍՀՄ-ը գիտակցում էր, որ հսկողություն սահմանելով քրդական շարժման հանդեպ, կարելի է այն օգտագործել թուրքական ու իրանական իշխանություններին թուլացնելու և նրանց վրա իր ազդեցությունը տարածելու համար: Սակայն գլխավոր նպատակը քրդերին օգտագործելն էր՝ ապագա խորհրդա-բրիտանական պատերազմում, որպեսզի նրանց օգնությամբ անգլիացիներին ծանր հարվածներ հասցնեն Իրաքում» (էջ 147):

Խորհրդային քաղաքականության բարդ ծալքերի բացահայտումը շարունակվում է նաև **չորրորդ ենթագլխում**՝ «Արարատի ապստամբությունը և Իրանում ՀՅԴ ներկայությունը որպես խորհրդա-իրանական հարաբերությունների փորձաքար»: Այստեղ ընդարձակ քաղաքագիտական վերլուծության հիման վրա ներկայացվել է քրդերի նկատմամբ Իրանի վերաբերմունքը, դրանում ՀՅԴ միջնորդության դերը՝ Ռուբենի գաղտնի առաքելությունը Թեհրանում և Արարատի ապստամբների մոտ Արտաշես Մուրադյանին փոխարինած՝ Վահան Գալստյանի (Սև Վահան) գործունեությունը:

Մենագրության **երրորդ գլխի** («Արարատի ապստամբության պարտությունը: Հայ-քրդական առաջին զինակցության դասերը») **առաջին ենթագլխում**՝ «Մարտական գործողությունները 1930 թ. առաջին կեսին և տարածաշրջանային ուժերի նոր հաշվեկշիռը», ներկայացված են քրդական հարցի շուրջ խորհրդա-թուրքական և խորհրդա-իրանական բանակցությունները: Մանրամասն կերպով բացահայտելով քրդական առանձին ցեղերի մասնակցությամբ ծավալված մարտական գործողությունների ընթացքը, հեղինակն իրավամբ Արարատի ապստամբությունը համարում է ավելի շատ համաքրդական, քան ցեղային կամ կրոնական:

Երկրորդ ենթագլխում՝ «ԽՍՀՄ-ի ռազմաքաղաքական շանտաժն Իրանի հանդեպ և Ռեզա շահի քաղաքականության փոփոխությունը» ցույց է տրվում քրդական շարժման հետագա ակտիվացման գործում ՀՅԴ դերակատարությունը: Վերլուծված են իրանական իշխանությունների արտաքուստ՝ չեզոք, բայց իրականում աջակից կեցվածքները և դրանց վերջ տալու ուղղությամբ ԽՍՀՄ-ի ձեռնարկած կտրուկ քայլերը:

Այստեղ հետաքրքիր է նաև Թուրքիայի դեմ պայքարող Արարատի ապստամբների հանդեպ Իրանի դրական դիրքորոշման հարկադիր փոփոխությանը զուգահեռ՝ այդ երկրում ՀՅԴ-ի և հայերի հանդեպ վերաբերմունքում նկատված որոշակի սառնության վերլուծությունը, որը, սակայն, ի տարբերություն քրդերի՝ ընդհանուր առմամբ պահպանեց իր դրական բնույթը:

Երրորդ ենթագլխում՝ «Արարատի լիակատար շրջափակումը, ապստամբների հեռացումը և թուրքական բանակի հաղթանակը», հանգամանակից կերպով ներկայացնելով մարտական գործողությունները՝ շեշտա-

դրումը տեղափոխվել է ապստամբության պարտության ներքին և արտաքին պատճառների վերլուծության վրա:

Չորրորդ ենթագլխում «Արարատի ապստամբության քաղաքական, տնտեսական և ժողովրդագրական հետևանքները» հետաքրքիր է ապստամբության պարտությունից հետո քրդերի նյութական ու մարդկային կորուստների, տնտեսական վիճակի վատթարացման և հարկային բեռի խստացման մանրամասն ներկայացումը: Տեղին են քննադատվել ապստամբության պարտությունից հետո հայերի նկատմամբ քրդերի մոտ կրկին առաջ եկած դժգոհությունն ու անհիմն մեղադրանքները, ներկայացված են նաև այդ ամենը հարթելուն միտված ՀՅԴ քայլերը:

«**Եզրակացություններ**»-ում ամփոփվում են քննարկված բոլոր հարցերը, տրվում են հիմնավոր գնահատականներ: Հեղինակը հատկապես մանրամասնորեն է ներկայացրել Արարատի ապստամբության ու Հոյբունի էական տարբերությունները քրդական նախորդ շարժումներից և կառույցներից:

Աշխատությունը գերծ է նաև որոշ թերություններից:

-Մեր կարծիքով հետագա հիմնավորման կարիք ունի հեղինակի վերջին ու բավականին շեշտադրված եզրակացությունը՝ «Արարատի ապստամբության պարտության հիմնական խորքային պատճառը 1920 թվականին Հայաստանի առաջին հանրապետության կործանմանը հանգեցրած խորհրդա-թուրքական դաշինքի վերականգնումն էր, որն այս անգամ գործադրվեց քուրդ ժողովրդի պայքարը ճնշելու նպատակով» (էջ 268): Մեր համոզմամբ, ապստամբության պարտության հիմնական պատճառը քրդերի անպատրաստ լինելն ու թուրքական այլատյաց քաղաքականությունն էին:

-Մենագրության վերնագիրն անտեղի ուռճացված է, ինչը պետք է փաստել նաև ենթագլուխների առումով:

Դրանով հանդերձ ակնհայտ է, որ հեղինակն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել նորահայտ արխիվային վավերագրեր, օգտագործել է խորհրդային հետախուզության զեկուցագրերը, թուրք և քուրդ հեղինակների գրքերը: Հայ քրդագիտության մեջ առաջին անգամ հատուկ հետազոտության թեմա է դարձրել Արարատի ապստամբությունը և նրա հանդեպ ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ արևմտյան երկրների ու Իրանի դիրքորոշումը: Հեղինակը հիմնավորված կերպով ամփոփել է քննարկված հարցերը, տվել անհրաժեշտ գնահատականներ:

Ջուտ պատմագիտականից զատ մենագրությունն ունի ոչ պակաս կարևոր արդիական-քաղաքական և գործնական-կիրառական նշանակություն, հատկապես երբ հաշվի ենք առնում այն պարագան, որ Մերձավոր-Միջին Արևելքում միջազգային հարաբերությունների հետագա սրման և բարդացման պայմաններում քրդական հարցը գնալով ավելի է կարևորվում:

Նկատելի է հետազոտողի ինքնուրույնությունը, հարցադրումների հիմնավորվածությունն ու դրանց լուծում տալու կարողությունը: Հեղինակը հսկայական աշխատանք է կատարել, և հայ քրդագիտություն մուտքի լուրջ հայտ ներկայացրել: Ցանկալի է, որպեսզի առաջիկայում այս մենագրությունը հրատարակվի նաև ռուսերեն, թուրքերեն և անգլերեն լեզուներով:

Խորին գոհունակություն հայտնելով Ա. Ս. Սայիյանի արժեքավոր աշխատության հրապարակման հետ կապված՝ ուրախությամբ արձանագրում ենք, որ Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունից բազում տասնամյակներ անց վերջապես այս հիմնական դիրքը ստացավ իր հնարավորինս սպառիչ և ամբողջական գիտական գնահատականը:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

Ավագ Ա. Հարությունյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայկական հարցի, հայ ազգային-ազատագրական շարժման, հայ ազգային կուսակցությունների պատմության առնչքային հիմնահարցերը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ Սևրի պայմանագրի, Գարեգին Նժդեհի գործունեության տարբեր դրվագների մասին, ինչպես նաև մատենագիտական բնույթի արժեքավոր ուսումնասիրություններ:

Summary

LONG-AWARE SCIENTIFIC WORK

On the uprising of Ararat in 1926–1930

Avag A. Harutyunyan

Key words – Ararat Uprising, Khoyboun, ARF Dashnaktsutyun, Kemalists, USSR, Reza Shah, Artashes Muradyan, Red Army, Soviet intelligence, blockade, defeat.

The monograph is devoted to the most important stage of the Armenian–Kurdish political and military cooperation, which until now has not been the subject of a special study in Armenian historiography.

In the context of the Ararat Uprising, he has analyzed the political, military, chronical and geographical features of the Kurdish movement, the conditions for the awakening of the Kurdish national identity, the evolution of the Kurdish nationalist circles in the sense of cooperation between Hoybun and the AR Federation (Dashnaktsutyun), the mechanisms for forming the Hoybun, political goals of the new stage of the Armenian–Kurdish relations.

ДОЛГОЖДАННЫЙ НАУЧНЫЙ ТРУД

Об Араратском восстании 1926–1930 гг.

Аваг А. Арутюнян

Ключевые слова – Араратское восстание, Хойбун, АРФ Дашнакцутюн, кемалисты, СССР, Реза шах, Арташес Мурадян, Красная Армия, советская разведка, блокада, поражение.

Монография посвящена наиболее важному этапу армяно–курдского политического и военного сотрудничества, что до сих пор не было предметом специального исследования в армянской историографии.

В контексте Араратского восстания анализируются политические, военные, временные и географические характеристики курдского движения, условия пробуждения курдского национального самосознания, эволюция взглядов курдских национальных кругов в смысле сотрудничества Хойбун с АРФ Дашнакцутюн, механизмы формирования Хойбун, политические цели нового этапа армяно–курдских отношений.